ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ը «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում նախակրթարանների վերանորոգման աշխատանքներին աջակցելու նպատակով հայտարարում է մրցույթ՝ ճարտարագետ-խորհրդատուի ընտրության նպատակով:
Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային բանկի ***“Գնումների կարգավորումներ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման վարկառուների համար”*** *թվագրված հուլիս 2016,* վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 (“Գնումների կարգավորումներ”) «Անհատ խորհրդատուի ընտրություն» ընթացակարգի համաձայն»:

Ճարտարագետ-խորհրդատուի աշխատանքային պարտականությունների շրջանակը կներառի հետևյալ աշխատանքները.

- Ապահովի փոխհամագործակցությունը՝ ԿԾԿ ԾԻԳ–ի և վերանորոգման աշխատանքներիրականացնող ուսումնական հաստատությունների միջև:
- Ծանոթանա Համաշխարհային բանկի շինարարական աշխատանքներին առնչվող գործողպահանջներին:
- Դիտարկի ուսումնական հաստատությունների կողմից միկրոծրագրերի առաջարկների հետ ներկայացված նախահաշիվները՝ անհրաժեշտության դեպքում կատարի ստուգումներ/ուղղումներ/փոփոխություններ՝ համագործակցելով հաստատությունների տնօրենների հետ :
- Ստուգի էներգաարդյունավետության պահանջներին համապատասխան առաջարկվող նյութերի ցանկը;
- Կատարի այցելություններ նախարարության և մարզպետարանի կողմից ներկայացված ուսումնական հաստատություններ ;
- Կատարի նախադպրոցական հաստատությունների տարածքների ընտրություն և ըստ անհրաժեշտության ներկայացնի առաջարկություններ՝ կատարվելիք տարածքային փոփոխությունների վերաբերյալ ;
- Հետևի ներառական կրթության քաղաքաշինական նորմերի կիրառմանը;

• Աջակցի համապատասխան գնումների փաստաթղթերի պատրաստմանը և դրանց գնահատմանը.

• Մասնակցի ուսումնական հաստատությունների նախնական, միջանկյալ և հետվերանորոգման աշխատանքներին առնչվողուսումնասիրությանը:

• Հետևի, որ վերանորոգման աշխատանքներն ընթանում են համապատասխան սահմանված նորմերի և ընթացակարգերի, անհրաժեշտության դեպքում ներկայացնի հատուկ կարծիք.

• Մասնակցի վերանորոգման աշխատանքներիկառավարմանը.

• Վերահսկի վերականգնողական աշխատանքների համար պատասխանատու գործողությունները. Վերահսկի վերանորոգման աշխատանքներին առնչվող գործողությունները.

• Գնահատի առաջացած խնդիրները և ներկայացնի առաջարկություններ արդյունավետ լուծումներ գտնելու համար.

• Վերահսկի վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ համաձայն.

• Ապահովի Ենթաբաղադրիչի վերանորոգմանան աշխատանքների ժամանակին և արդյունավետ իրականացումը.

• Վերանայի հաշվետվությանը կից դպրոցների կողմից ներկայացված վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ակտերը. Կատարի ընտրանքային հսկիչ չափումներ: Խնդիրների հայտնաբերման դեպքում առաջարկություններ ներկայացնի դրանք մեղմելու և լուծելու համար:

• Կատարի Ծրագրի իրականացման մոնիտորինգ՝ պարբերական այցելությունների միջոցով՝ պարզաբանելու ջեռուցման և էներգախնայողության քաղաքաշինական պահանջները.

• Անհրաժեշտության դեպքում կատարի այլ առաջադրանքներ, որոնք կարող են հանձնարարվել 1.1 ենթաբաղադրիչի ղեկավարի կողմից.

• Ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների վերաբերյալ ամսական ամփոփ հաշվետվություն, ներառյալ վերանորոգվող տարածքներում նախատեսված, ավարտված և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն /ուղեկցվող նկարներով/:

Նկարագրված աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2022թ. հուլիսից մինչև 2025թ. երկրորդ կիսամյակ ընկած ժամանակահատվածը:

Դիմող թեկնածուները պետք է բավարարեն փորձի և որակավորման հետևյալ պայմաններին՝

• Բարձրագույն կրթություն՝ մասնագիտացված շինարարական աշխատանքների ճարտարագիտության կամ ճարտարապետության ոլորտում (պահանջվում է վավերացված դիպլոմ)

• Առնվազն հինգ տարվա փորձ վերականգնողական/շինարարական աշխատանքներում և դրանց իրականացման մասնագիտական փորձաքննություն (ապացուցվում է փաստաթղթով)

• Առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ շինարարական աշխատանքների նախագծերի նախագծման, իրականացման և կառավարման ոլորտում, նախընտրելի է միջազգային ֆինանսավորող կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերով:

• Հանրային և միջազգային նախագծերի, նախընտրելի է Համաշխարհային բանկի ծրագրերի հետ կապված գնումների ընթացակարգերի փորձը կդիտվի որպես առավելություն;

• Վերականգնողական/շինարարական աշխատանքներին առնչվող ՀՀ գործող նորմերի և իրավական ակտերի իմացություն.

• Նորմատիվ փաստաթղթերի հետ աշխատելու կարողություն.

• համակարգչային տեխնիկայի օգտագործման բավարար հմտություններ;

• Գերազանց կազմակերպչական և հաղորդակցման հմտություններ;

• Ունենա հաղորդակցվելու և համագործակցելու կարողություններ և գերադասելի է վերապատրաստման կարողություններով;

• Անգլերեն լեզվի լավ իմացություն (բանավոր և գրավոր):

Թեկնածուների գնահատումը կիրականացվի հետևյալ կերպ.

- ընդհանուր որակավորումը– 30 միավոր
- ընդհանուր փորձը - 30 միավոր
- հատուկ փորձը - 40 միավոր

- Թեկնածուի ընդհանուր որակավորումը.
  - բարձրագույն կրթություն շինարարական-ճարտարագիտության կամ ճարտարապետության ոլորտում

- Թեկնածուի ընդհանուր փորձը
  - առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

- Թեկնածուի հատուկ փորձը
  - առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ շինարարական աշխատանքների կառավարման ոլորտում
  - աշխատանքային փորձ ուսումնական հաստատությունների հետ

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունը՝ անուն, ազգանուն, ծննդյան թիվ, կրթություն, մասնագիտացում, աշխատանքային փորձ:
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փ. 73 հասցեով, կամ էլ. փոստով (info@cfep.am) մինչև 2022թ.-ի հունիսի 28-ը, ժամը 17:00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոնշյալ հասցեով կամ 57-56-90 (27) հեռախոսահամարով:

Խորհրդատուի աշխատանքային պարտականությունները ամբողջական ներկայացված է կից՝ Հավելված 1-ում:

Հավելված 1

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. **Առաջադրանք**

Սույն տեխնիկական առաջադրանքով նախատեսված խորհրդատվական ծառայությունները կտրամադրվեն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև կնքված վարկային համաձայնագրի (Վարկ համար 9389- -AM) լրացուցիչ ֆինանսավորմամբ (ԼՖ) իրականացվող «Կրթության բարելավում» ծրագրի (այսուհետ՝ԿԲԾ շրջանակներում:ԼՖ-ով ԿԲԾ-ն իր գործողությունները կծավալի 5 հիմնական ութողղություններով.

• Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

• Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը•Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում • Ենթաբաղադրիչ 1.5. Հանրակրթական դպրոցների վերազինում

• Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:Ենթաբաղադրիչների 1.1-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շինարարական և վերանորոգման աշխատանքներ: Մասնավորապես, նախատեսվում է վերանորոգել շուրջ 80 հիմնվող նախակրթական հաստատություն, ինչպես նաև նախակրթարաններին հարող տարածքներում հիմնել խաղահրապարակներ:

2. **Տեխնիկական առաջադրանքի նպատակը**

Տեխնիկական առաջադրանքի նպատակն է կազմակերպել, համակարգել և վերահսկել Ծրագրով նախատեսված վերանորոգման աշխատանքները՝ ճարտարագետ-խորհրդատու ընտրելու միջոցով՝ ապահովելով դրանց ժամանակին և արդյունավետ իրականացումը:

3. **Աշխատանքի շրջանակը**

Խորհրդատուն պատասխանատու կլինի ենթաբաղադրիչի շինարարական աշխատանքների մոնիտորինգի, գնահատման և առաջադրանքների համակարգման համար: Ամեն դեպքում, նա պատասխանատվություն չի կրելու կապալառուների անմիջական վերահսկողության համար, հետևաբար նա իր բոլոր դիտողությունները և առաջարկությունները կուղղի 1.1 ենթաբաղադրիչի ղեկավարին: Իր առաջադրանքների համար նա պետք է պարբերաբար այցելի յուրաքանչյուր վայր : Այցելություններ կարող են իրականացվել նաև ԾԻԳ-ի անձնակազմի հետ: Խորհրդատուին ԿԾԿ գրասենյակիի տարածքում կտրամադրվի աշխատավայր՝ հագեցած անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով:

Ճարտարագետ-խորհրդատուն պետք է՝

- Ապահովի փոխհամագործակցությունը՝ ԿԾԿ ԾԻԳ–ի և վերանորոգման աշխատանքներիրականացնող ուսումնական հաստատությունների միջև:
- Ծանոթանա Համաշխարհային բանկի շինարարական աշխատանքներին առնչվող գործողպահանջներին:
- Դիտարկի ուսումնական հաստատությունների կողմից միկրոծրագրերի առաջարկների հետ ներկայացված նախահաշիվները՝ անհրաժեշտության դեպքում կատարի ստուգումներ/ուղղումներ/փոփոխություններ՝ համագործակցելով հաստատությունների տնօրենների հետ :
- Ստուգի էներգաարդյունավետության պահանջներին համապատասխան առաջարկվող նյութերի ցանկը;
- Կատարի այցելություններ նախարարության և մարզպետարանի կողմից ներկայացված ուսումնական հաստատություններ ;
- Կատարի նախադպրոցական հաստատությունների տարածքների ընտրություն և ըստ անհրաժեշտության ներկայացնի առաջարկություններ՝ կատարվելիք տարածքային փոփոխությունների վերաբերյալ ;
- Հետևի ներառական կրթության քաղաքաշինական նորմերի կիրառմանը;

• Աջակցի համապատասխան գնումների փաստաթղթերի պատրաստմանը և դրանց գնահատմանը.

• Մասնակցի ուսումնական հաստատությունների նախնական, միջանկյալ և հետվերանորոգման աշխատանքներին առնչվողուսումնասիրությանը:

• Հետևի, որ վերանորոգման աշխատանքներն ընթանում են համապատասխան սահմանված նորմերի և ընթացակարգերի, անհրաժեշտության դեպքում ներկայացնի հատուկ կարծիք.

• Մասնակցի վերանորոգման աշխատանքներիկառավարմանը.

• Վերահսկի վերականգնողական աշխատանքների համար պատասխանատու գործողությունները. Վերահսկի վերանորոգման աշխատանքներին առնչվող գործողությունները.

• Գնահատի առաջացած խնդիրները և ներկայացնի առաջարկություններ արդյունավետ լուծումներ գտնելու համար.

• Վերահսկի վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ համաձայն.

• Ապահովի Ենթաբաղադրիչի վերանորոգմանան աշխատանքների ժամանակին և արդյունավետ իրականացումը.

• Վերանայի հաշվետվությանը կից դպրոցների կողմից ներկայացված վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ակտերը. Կատարի ընտրանքային հսկիչ չափումներ: Խնդիրների հայտնաբերման դեպքում առաջարկություններ ներկայացնի դրանք մեղմելու և լուծելու համար:

• Կատարի Ծրագրի իրականացման մոնիտորինգ՝ պարբերական այցելությունների միջոցով՝ պարզաբանելու ջեռուցման և էներգախնայողության քաղաքաշինական պահանջները.

• Անհրաժեշտության դեպքում կատարի այլ առաջադրանքներ, որոնք կարող են հանձնարարվել 1.1 ենթաբաղադրիչի ղեկավարի կողմից.

• Ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների վերաբերյալ ամսական ամփոփ հաշվետվություն, ներառյալ վերանորոգվող տարածքներում նախատեսված, ավարտված և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն /ուղեկցվող նկարներով/:

4. **Հաշվետվություն**

Խորհրդատուն ամսական կտրվածքով հաշվետու է Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ ՊՀ տնօրենին:

5. **Տևողությունը**

Ճարտարագետ-խորհրդատուն ծառայություններ է մատուցելու Ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում:

6. **Վարձատրություն**

Խորհրդատուին ամսական կտրվածքով կվճարվի «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի ֆինանսական միջոցներից՝ համաձայն նրա հետ կնքված պայմանագրի պայմանների: